

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՔՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԼԱՔՈՐԱՏՈՐԻԱ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐԴԻ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Գիտաժողովի հիմնադրույթներ

ԵՐԵՎԱՆ 2016

ՀՏԴ008 (=19) :06

ԳՄԴ 71.4 (5 Հ)

Հ 253

Հրատարակվում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:

**ԽՄԲԱԳԻՐ՝ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌՈՒՔԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ  
ՊԱՏՐԱՍՏԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ՝ ՍՈՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Հ 253 Հայկական ուսումնասիրման արդի հիմնախնդիրները: Գիտաժողովի քաղաքակրթության հիմնադրույթներ/ Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ- Եր.:2016, 30 էջ:

Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիայի նախաձեռնությամբ և Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի աջակցությամբ 2016 թվականի հուլիսի 12-ին կազմակերպվեց «Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման արդի հիմնախնդիրները» խորագրով գիտաժողով: Գիտաժողովի աշխատանքներին մասնակցեցին Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի, Երևանի պետական կոնսերվատորիայի և գիտակրթական տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ: Գիտաժողովում քննարկվել են հայկական քաղաքակրթության տեսության հարցեր, հայկական քաղաքակրթության տեղը ժամանակակից աշխարհում, հայոց անկախ պետականության դերի և համաշխարհայնացման արդի փուլում հայոց ինքնության պահպանման, սփյուռքի և դրա քաղաքակրթական դերակատարության հարցեր:

ՀՏԴ008 (=19) :06

ԳՄԴ 71.4 (5 Հ)

ISBN978-99941-69-54-3 © ՀՊՄՀ, 2016

© Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիա, 2016

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |    |
|---|----|
| <b>ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ-</b> ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ .....   | 5  |
| <b>ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ-</b> ՌՈՒԲԵՆ ՄԻՐՁԱԽԱՆՅԱՆ .....  | 7  |
| <b>ԱՂԱՋԱՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ</b> - ԱՅԴ ԴԱՌՆԱՆՈՒՇ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....  | 9  |
| <b>ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՆԳԵԼԻՆԱ-</b> ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ .....                           | 12 |
| <b>ԴԱՆԻԵԼՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ-</b> ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ.....                    | 13 |
| <b>ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԻՍԱ-</b> ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ՝ XIX ԴԱՐԻ ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 14 |    |
| <b>ԵՐԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ-</b> ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ .....                                       | 15 |
| <b>ԵՓՐԵՄՅԱՆ ԼԻԼԻԹ-</b> ՍԵՀԵՐԻ ԳԱՂՏՆԻՔԸ .....  | 17 |
| <b>ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-</b> ԱՆՀԱՏԸ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ .....  | 18 |

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱԳԻԿ-** ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ԿԵՐՊԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԺԱ Դ. ԻԻ ԿԵՍԻՆ .....19

**ՀՄԱՅՆԱԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ-** ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ.....20

**ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ-** ՍՓՅՈՒՌՔԸ ԵՎ ԴՐԱ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ .....25

**ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՐՏ-** ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Մ.Թ.Ա. ԻԻ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԻԻ ԿԵՍԻՆ.....27

**ՍԱՖՐԱՍՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ-** ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ .....28

**ՎԱՐԴՈՒՄՅԱՆ ԳՈՀԱՐ-** ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ .....30

**ԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՈՍՔ-** ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ .....31

**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ** .....32

**ԲԱՑՄԱՆԽՈՍՔ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՎԱՐԻՉ,  
ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ**

Հարգելի պարոն Միրզախանյան, հարգելի ներկաներ: Այսօր կարևոր օր է նորաստեղծ Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիայի կարճատև կյանքում, քանի որ մենք անց ենք կացնում մեր առաջին հրապարակային միջոցառումը: Ուստի ես կանգ կառնեմ նախապատմության վրա: Երբ ռեկտորի կողմից ինձ առաջարկվեց գլխավորել նորաստեղծ լաբորատորիան, ներկայացնել թեմաներ այն գիտական ուղղության վերաբերյալ, որով պետք է զբաղվել, ռեկտորն ընտրեց հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիան: Սա շատ կարևոր ընտրություն էր, քանի որ ըստ էության լաբորատորիայի առջև խնդիր էր դրվում նորարարական գործունեություն ծավալել: Գաղտնիք չէ, որ վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանում փորձեր են կատարվել հայկական քաղաքակրթության ուսումնասիրման բնագավառում: Նույնիսկ ամենաբարձր կառավարական մակարդակով այս խնդիրը քննարկվել է, բայց ցավոք սրտի նախաձեռնությունները շարունակություն չեն ունեցել: Լաբորատորիայի առջև խնդիր դրվեց նոր ճանապարհով գնալ: Այդ նոր ճանապարհը պետք է լինի հետևյալը. ստեղծել հայկական քաղաքակրթության վերաբերյալ գիտական մի հայեցակարգ, այնուհետև զարգացնել քաղաքակրթության ուսումնասիրման տարբեր ոլորտները: Այնպես որ մեր խնդիրը հայկական քաղաքակրթության գիտական հայեցակարգի ստեղծումն է: Պետք է ասեմ, որ մենք արդեն մի քանի միջոցառումներ, քննարկումներ անց ենք կացրել լաբորատորիայի ներսում, որին մասնակցել են համալսարանի առաջատար մասնագետները: Սա արդեն իսկ լավ գրավական է, քանի որ պարզ դարձավ, որ համալսարանը ունի անհրաժեշտ գիտական ներուժ այս խնդիրը իրականացնելու համար: Լաբորատորիան իր նպատակը տեսնում է համադրել այդ գիտական ներուժի գործունեությունը, փորձել

ջանքերի ընդհանրացումով ստեղծել գիտական մի կոլեկտիվ, որը կիրականացնի այս խնդիրը:

Կարծում եմ, այն հայեցակարգը, որը պետք է ստեղծվի, պայմանական բնույթ է կրելու: Մենք ոչ մեկին չպետք է ապացուցենք, որ եղել է հայկական քաղաքակրթություն, մենք պետք է համաձայնության գանք դրա շուրջ: Ես կարծում եմ սա է միակ ճանապարհը: Եվ այդ համաձայնությունը պետք է տեղի ունենա հայկական սերուցքի, հայոց ինտելեկտուալ, հոգևոր ընտրանու շրջանակներում՝ ոչ միայն հայաստանյան, այլ նաև սփյուռքի:

21-րդ դարը նոր մարտահրավերներ է բերում իր հետ և այդ մարտահրավերները բավական վտանգավոր են մեզ համար, և եթե մենք չկարողանանք պատասխան գտնել այդ մարտահրավերներին դիմագրավելու, մենք շատ բան կկորցնենք: Կարծում եմ՝ հայկական քաղաքակրթության հայեցակարգը այդ մարտահրավերներին կարող է արժանի պատասխան լինել: Եվ դրա համար մենք պետք է մեր լաբորատորիայի գործունեությունը ծավալենք համալսարանի շրջանակներից դուրս, դարձնենք այն համահայկական երևույթ: Ուրախությամբ ուզում եմ նշել, որ բավական մեծ հետաքրքրություն է առաջացրել մեր այս առաջին հրապարակային միջոցառումը: Հասունացել է ժամանակը այս խնդիրը մեր առջև դնելու և լուծելու, իսկ այսօրվա մեր գիտաժողովը առաջին փոքրիկ քայլն է այս ուղղությամբ: Մեկ անգամ ևս շնորհակալություն եմ հայտնում համալսարանի ղեկավարությանը, պարոն Ռուբեն Միրզախանյանին, որ նա ոչ միայն նպաստեց լաբորատորիայի հիմնադրմանը, այլ նաև շատ ճիշտ ընտրություն կատարեց և ըստ էության հիմք դրեց այս ուղղության հետազոտմանը մանկավարժական համալսարանում:

**ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ՝ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ, ՊԱՏՄ. ԳԻՏ. ԴՈԿՏՈՐ,  
ՊՐՈՖԵՍՈՐ ՌՈՒՔԵՆ ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆ**

Այսօր Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում տեղի է ունենում Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիայի առաջին գիտական միջոցառումը: Նախ և առաջ ցանկանում եմ ողջունել և բոլորիս շնորհավորել նման լաբորատորիայի ստեղծման կապակցությամբ: Վստահ եմք, որ մոտ ապագայում Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիան կդառնա ինստիտուտ մանկավարժական համալսարանի շրջանակներում: Խ.Արովյանի անվան հայկական մանկավարժական համալսարանը մեր երկրի, հայության կյանքում ունի բացառիկ դերակատարում: Լինելով մեր իրականության մեջ խոշորագույն մանկավարժական ուսումնական հաստատությունը, մենք կոչված ենք լուրջ ջանքեր գործադրել, որպեսզի արմատական փոփոխություններ տեղի ունենան դպրոցաշինության մեջ: Կան շատ մոտեցումներ, որոնք վերաբերում են այսօրվա դպրոցի խնդիրներին և որոշակի առումով դրանք պայմանավորված են ուսուցչի ինստիտուտով: Անկախ նեղ մասնագիտական ուղղվածությունից, ուսուցիչը պետք է լինի բազմակողմանի զարգացած անձ, լինի հայրենասեր և հենց այդ տեսանկյունից լաբորատորիայի գործունեությունը, և ոչ հեռու ապագայում ինստիտուտի գործունեությունը, պետք է ունենա մեծ նշանակություն: Համալսարանների ապագան հետազոտական է: Հետազոտական համալսարան հասկացությունը ընդունված երևույթ է աշխարհի համալսարանական կյանքում: Հուսով եմ, որ հետագա քննարկումների ընթացքում հնարավորինս մեծ թվով մագիստրոսներ կներգրավվեն և իրենց ակտիվ մասնակցությամբ կներկայացնեն իրենց հետազոտությունները մի այնպիսի հսկայածավալ ոլորտում, ինչպիսին հայկական քաղաքակրթությունն է իր պատմությամբ, ներկայով և ապագայի տեսլականով: ՀՀ 25 տարվա պատմության մեջ, թերևս առաջին անգամ Հունգարիայի Պիտեր Պազմանի Կաթոլիկ համալսարանում, հոկտեմբեր ամսին բացվելու է հայագիտական ամբիոն: Հայագիտական ամբիոններ

նախկինում ևս եղել են, բայց վերջին տարիների ընթացքում դրանք ոչ թե բացվել՝ այլ, ցավոք սրտի, փակվել են թե՛ Միացյալ Նահանգներում, և թե՛ Եվրոպայում: Կարծում ենք, որ այս օրինակը միակը չի լինի: Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը վերջին տարիների ընթացքում կապեր է հաստատել Ամերիկայի Միացյալ Նահանգների, Եվրոպայի, Ռուսաստանի Դաշնության առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ: Համալսարանը իր պարտքն է համարում հայագիտությունը, մեր ժողովրդի պատմությունը, մեր քաղաքակրթության պատմությունը ըմբռնելի, ծանոթ դարձնել աշխարհին:

Մեկ անգամ ևս մաղթում եմ բեղմնավոր աշխատանք: Գիտաժողովին ներկայացված թեմաները հետաքրքիր են և վստահ եմ, որ այս առաջին քննարկումը սկիզբ կդնի մեծ և լուրջ գործունեության:



## **ԱՅԴ ԴԱՌՆԱՆՈՒՇ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

1. Վերջին քսանհինգամյա /քառորդ դար/ մեր գոյությունը նշանակալի է երկու իրողությամբ՝ պետականության ակամա շանս և ժողովրդի հերոսական ջանքերով ու զոհաբերություններով ազատագրված Արցախ: Սակայն, ցավոք սրտի, երկուսն էլ այսօրվա դրությամբ որոշակիորեն վտանգված են, որը նորից ու նորից ստիպում է հաշվի նստել ցանկացած ժողովրդի փորձով ստուգված ճշմարտության հետ. ազատությունը ծանր բեռ է՝ տանելի միայն մտածող-ստեղծագործող անհատների ու հանրությունների համար:

2. Վերագտնված պետականությունը /համակեցական ազատությունը/ մեզ համար ծանր բեռ է ինչպես օբյեկտիվ /նման դեպքերի համար օրինաչափ/, այնպես էլ սուբյեկտիվ /զուտ ազգային/ գործոնների պատճառով: Այս երկու մարտահրավերներին մեր հակազդեցության համարժեքությունն էլ որոշակիացնելու է հայկական քաղաքակրթության ներկան ու ապագան՝ ճշտելով իբրև հանրություն՝ պետականություն ունենալու և իբրև քաղաքացի՝ ազատ լինելու մեր կարողությունը:

3. Ոչ պետականությունից պետականություն կայացնելու համար միայն կառավարման մարմիններ և կառավարվողների զանգված ունենալը քիչ է: Դրանք պետք է համարժեք լինեն համակեցական նոր կարգավիճակի պահանջներին ու աշխարհաքաղաքական հանգամանքներին: Այստեղ անելիքն ակնհայտ էր: Մոտ յոթ հարյուր տարի առաջ պետականությունը կորցրած /1918-20 թթ. կարճատև պետականությունը քննարկվող առումով էական նշանակություն ունենալ չէր կարող/ մեր ժողովուրդը կուտակել էր ազգային նկարագրի, վարքագծի, կենսական խնդիրներ լուծելու, աշխարհայացքի այնպիսի որակներ, որոնք ծառայել էին գոյատևման խնդիրներ լուծելուն, բայց սկզբունքորեն անհամատեղելի են պետական-ինքնիշխան կարգավիճակով կենսակերպին: Դրանցից են անհատապաշտությունը, օրենքը շրջանցելը, ընտանիքից

կարևոր այլ սոցիալական ինստիտուտ չարժևորելը, հայրենիքից դուրս ապահով կյանք փնտրելու նախատրամադրվածությունը և այլն: Միակ առանցքը, որի շուրջը հեշտությամբ համախմբվում էր և է, ազգային ինքնագիտակցություն ունեցող հայ անհատների մեծամասնությունը, եղեռնահարված, հայրենիք-կենսատարածք կորցրածի վիրավորված արժանապատվությունն է, ունանշի ինքնաբուխ ձգտումը:

4. Պետականություն կայացնելը դժվարացնող գործոնների մեջ էին նաև ազգային ճակատագրի չլուծված խնդիրները՝ կորուսյալ հայրենիք, բնաջնջված-աշխարհասփյուռ գենոֆոնդ, չորս հարևան երկրներից առնվազն երկուսի հետ անթաքույց թշնամական հարաբերություններ, սեփական կարողություններն անտեսելու և հովանավոր պետություններով խնդիրներ լուծելու նախատրամադրվածություն և այլն: Միջին դարերում պետականությունը կորցրած հայ ժողովուրդը երեսուն-երեսունհինգ սերունդների հերթափոխությամբ կուտակել էր խնդիրներ, որոնք հայի մեջ խորացրել էին ոչ թե պետության քաղաքացու, այլ զարկված ու զրկված ժողովրդի ազգային գիտակցությունը:

Վերականգնված պետականությունը այդ խնդիրների լուծումը պարտավորության պես դրեց քսաներորդ դարավերջի հայության ուսերին:

5. Պետականության քառորդդարյա փորձը կշեռք է, որի մի նժարին մեր ազգային գիտակցությունն է, մյուսին՝ քաղաքացիականը: Իրականությունը համառորեն ցույց է տալիս, որ առաջինն անհամեմատ ծանր է երկրորդից: Մենք էյֆորիկ ու ինքնամոռաց նվիրումով, ինքնաբուխ համախմբումով նետվում ենք Արցախն ազատագրելու, պաշտպանելու /եթե անգամ այլ երկրի քաղաքացի ենք արդեն նույնիսկ մի քանի սերունդ/, դրա համար չենք խնայում անգամ մեր սուղ միջոցները, որովհետև... դա կռիվ է թուրքի դեմ, ուր պոռթկում է վիրավորված էթնիկ արժանապատվությունը: Այդպես դարեր շարունակ կռվել ենք ու էլի կռվելու ենք բազմաթիվ ժողովուրդների ու երկրների բանակներում, միայն թե այդ կռիվը թուրքի դեմ լինի: Մեր նույնիսկ ենթագիտակցության մեջ սրբացած է ցանկացած պատերազմ, որը թուրքի դեմ է: Դրա

համար էլ մեր պարտքն ենք համարում այդ կռվի զինվորը լինել: Վստահ եմ՝ եթե Թուրքիայում քաղաքացիական պատերազմ սկսվի, երկու կողմերում էլ հայեր կլինեն:

6. Մինչդեռ պետություն կառուցողի, պետության ազատ քաղաքացու մեր գիտակցությունը համառորեն չի կայանում: Հայաստանաբնակ հայերի մեծամասնությունը ոչ մի կերպ չի գիտակցում, որ դարերով կուտակված իր ազգային հիմնախնդիրները կարող է լուծել ոչ թե դեպքից դեպք հայրենասիրական պոռթկումով, այլ ներքին ու աշխարհաքաղաքական մարտահրավերներին համարժեք ուժեղ պետություն կառուցելով: Ոչ թե արտագաղթելով, իր քվեն վաճառելով, թայֆայական թալանին ամեն կերպ մասնակից լինելու ձգտումով, այլ երկրի քաղաքացու իր իրավունքին տեր կանգնելով: Մենք չենք գիտակցում, որ փախչում ենք հենց մեր մասնակցությամբ կայացած վատ կյանքից, ի վերջո՝ մեր տեսակից: Ու հեռանալով՝ դառնում ենք այն համակեցության անդամը, որի յուրաքանչյուր քաղաքացին սերնդեսերունդ ամենօրյա հետևողական նվիրումով է կայացրել իր բարեկեցությունը և մրցունակ պետականությունը: Բաներ, որոնք մերը և մեր գոյության երաշխիքը լինել չեն կարող:

Մեր իռացիոնալ-զգացմունքային ազգային գիտակցությանը հավասարակշռող պետության քաղաքացու ռացիոնալ գիտակցությունը մեզ համար դեռ մնում է անհասանելի: Ահա այս չլուծվող հիմնախնդիրն է, որ մեր օրերում ակնհայտորեն վտանգում է ոչ միայն հանգամանքների պարզև պետականությունը, նաև ազգային գիտակցության պոռթկումներով ազատագրված Արցախը:

Եթե չկայանա պետության քաղաքացի հայը /չփոխվի մարդու մեր տեսակին բնորոշ որակը/, ապա չի հաջողվի փոխել մեր ընթացքի տրամաբանությունը, որը ցավալի կորուստներով է նշանավորվել: Իսկ վերջնական կորուստներից խուսափելու միակ տարբերակը պետություն կոչվող դառնանուշ /գուցեն դժվար իրագործելի, բայց կենսականորեն անհրաժեշտ/ ինստիտուտի լիարժեք կայացումն է:

7. Կարծում եմ՝ այս խնդրի հստակ գիտակցումով պետք է ծավալվի հայագիտական ցանկացած ուսումնասիրություն, որպեսզի զերծ լինի մեր ականջին ու սրտին հաճելի

ինքնասիրահարվածի հիացումից: Այդ դեպքում մենք չենք ունենա գիտության տեղ ներկայացվող ազգամեծար կեղծիք, այլ կունենանք առերեսում ինքներս մեզ հետ և ճշմարտության գիտակցում: Միայն այդպես կճշտվեն մեր լինել-չլինելու խնդիրը լուծելու համար անելիքները:

**ԲԱՆ. ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՆԳԵԼԻՆԱ,  
ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ**

### **ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ**

Ժամանակակից աշխարհի գլոբալացման և աշխարհակարգի ձևափոխման պայմաններում վտանգված է հայոց ինքնության և պետականության պահպանման հիմնահարցը:

Ընտանեկան արժեքների ոչնչացումը, հասարակության և անհատի եսասիրությունն ու պարտադրված անբարո վարքագծի դրսևորման խրախուսումը նպաստում են ինչպես ազգային ինքնության, այնպես էլ ազգային մշակույթների ու պետությունների ոչնչացմանը: Այս համատեքստում կարևոր է ազգային բարոյական հիմքերի արդիականացումը /քրիստոնեական արժեքներ, աշխարհայացք, լեզու/, որոնց շնորհիվ դարեր շարունակ հայ պետականության բացակայության պայմաններում պահպանվել է ազգային ինքնությունը: Ազգային բարոյական հիմքերը ընկած են հայ ընտանեկան ավանդույթների, անհատի և ժողովրդի կողմից հայրենիքին ծառայելու արժեհամակարգում:

Հայաստանը, որպես առաջին քրիստոնյա պետություն, կարող է դառնալ հոգևոր արժեքների պաշտպան ընդդեմ դրսից եկած ուժերի և պարտադրված օրենքների, որոնք կոչված են փոխարինելու քրիստոնեական արժեքները: Հայկական քաղաքակրթության

բարոյական ներուժը պետք է ուղղված լինի ընդդեմ այդ համամարդկային չարիքի՝ մշակելով հայկական մշակույթի և քաղաքակրթության ռազմավարական և մարտավարական ծրագիր հայապահպանման ու պետականաշինության գործում:

**ՊԱՏՄ. ԳԻՏ. ԴՈԿՏՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ,  
ՀՀ ԳԱԱ ՊԻ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻ  
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

Հայկական քաղաքակրթական արժեհամակարգը խարսխված է ամբողջ Հայկական լեռնաշխարհը ընդգրկող պատմա-մշակութային ժառանգության վրա: Մարդկության քաղաքակրթության և Հայաստանի հոգևոր ակունքները համընկնում են:

Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական տերմինաբանությունը՝ Հայաստանի տեղանունների ամբողջականությունը, պատկանում է հայ ազգային լեզվամտածողության հիմնաշերտին:

Աշխարհի արդի քաղաքական սահմանները չեն համապատասխանում պատմական՝ քաղաքակրթական սահմաններին: Այս հանգամանքը, հատկապես հայկական ամբողջական քաղաքակրթական արժեհամակարգի համար աղետալի հետևանքներ է ունեցել՝ Արևմտյան Հայաստանում և Կիլիկյան Հայաստանում, թուրք ցեղասպան քաղաքականության հետևանքով, ոչնչացվելով Հայոց ցեղասպանության և դրան հաջորդած տասնամյակներում, ինչպես նաև՝ Արևելյան Հայաստանից բռնազավթված տարածքներում, օրինակ՝ Նախիջևանում ոչնչացվեցին հայկական բոլոր պատմական հուշածանները և Հին Ջուղայում տասնյակ հազարավոր խաչքարերից վերջին մնացած խումբը Ադրբեջանի հանցավոր ղեկավարության հրահանգներով:

Հայաստանի պատմաքաղաքակրթական ամբողջական ժառանգությունն ազգային անվտանգության կենսական ոլորտում ունի էթնոպաշտպանական նշանակություն, որի պահպանության ազգա-պետական երաշխավորներն են Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը:

**ՊԱՏՄ. ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ ԴՈՒՄԻԿՅԱՆ ԱԼԻՍԱ,  
ՀՀ ԳԱԱ ՊԻ**

## **ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ՝ XIX ԴԱՐԻ ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

XIX դարի ֆրանսիացի հայագետների՝ Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության, պատմական աշխարհագրության, մշակութային և քաղաքակրթական, պատմափիլիսոփայական ու պատմակրոնական ոլորտները ներառող հիմնահարցերի ուսումնասիրության հարուստ գիտական ժառանգություն են թողել: Ֆրանսիայի ազգային գրադարանում հայկական ձեռագրերի հարուստ ֆոնդի առկայությունը Ժան-Պիեռ Անրեմիի բնութագրմամբ համարվում է հայկական քաղաքակրթության հանդեպ ֆրանսիացի մտավորականների հետաքրքրության արտացոլումը: Մեսրոպյան այբուբենի ստեղծման առաջին արգասիքի՝ Սուրբ Գրքի թարգմանության համբավը հայ գրական Ոսկեդարից հարյուրամյակներ անց, հասնելով Ֆրանսիա՝ Լուսավորչական շարժման դարաշրջանում բարձր գնահատվեց: Ֆրանսիական պատմակրոնական մտքի ոլորտում էր Հայաստանի քաղաքակրթական արժևորումը համաշխարհային պատմահոգևոր երևույթների աստվածաշնչյան ընկալումների լույսի ներքո: XVIII-XIX դդ. Ֆրանսիական պատմագրության մեջ արտացոլված քաղաքակրթական բնույթի տեղեկությունները կարևոր են Հայաստանի տնտեսական և մշակութային կյանքի պատմությունը ուսումնասիրելիս: Ֆրանսիացի հայագետները կարևոր ներդրում

կատարեցին հայկական քաղաքակրթական արժեքների հետազոտության բնագավառում  
և նրանց գիտական ժառանգությունը զգալիորեն պահպանում է իր արդիական  
նշանակությունը:

**ՊԱՏՄ. ԳԻՏ. ԴՈԿՏՈՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ  
ԵՊՀ**

## **ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ**

Վերջին շրջանում հայոց պատմության ուսումնասիրությունը՝ նոր չափանիշներ  
չորդեգրելու և համաշխարհային գիտական նվաճումներին չհամապատասխանեցնելու  
պայմաններում աստիճանաբար դանդաղեցնում է զարգացումը և հետազոտության  
բովանդակային նոր ուղղությունների բացակայության պայմաններում մտնում փակուղի:  
Վերջին երևույթը հատկապես ակնառու է հայոց պատմության այս կամ այն  
իրադարձություններին նվիրված գիտական հետազոտություններն արտասահմանյան  
պարբերականներում հրատարակման պարագայում, երբ դրանք հիմնականում չեն  
համապատասխանում աշխարհի առաջատար դպրոցների չափանիշներին, ուստի նաև  
մրցունակ չեն:

Նշված խնդիրների առաջացման մեջ իր էական տեղն ունի հայոց պատմության՝  
խիստ ընդհանրական ու թերի պարբերացման չափանիշների առկայությունը:  
Պատմության պարբերացումն իրենից ներկայացնում է պատմության և պատմական  
գործընթացների՝ ըստ փուլերի և ենթափուլերի համակարգման մի ձև: Պարբերացումն  
իրականացվում է նախապես ընտրված սկզբունքներով, որոնց հիման վրա  
պատմափուլերը ձեռք են բերում տարբերակիչ յուրահատկություններ: Արդյունքում  
ստացվում է պատմության՝ համեմատաբար կայուն բնութագրիչներով  
ժամանակաշրջանային բաժանում: Պարբերացման նպատակը պատմության առանձին  
Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման լաբորատորիա

ինքնուրույն շրջափուլերի բովանդակության խորքային քննությունն է՝ հիմնված բաժանման չափորոշիչների այնպիսի ընտրության վրա, որ հնարավորություն է տալիս լավագույնս հասկանալ պատմության տրամաբանությունն ու օրինաչափությունները:

Մինչև օրս հայոց պատմության պարբերացումն իրականացվել է խիստ ընդհանրական և պայմանական *հասարակարգերի մոտեցման* տեսանկյունից՝ հիմնված 5 հասարակարգերի (նախնադարյան համայնական, ստրկատիրական, ավատատիրական, կապիտալիստական) բաժանելու սկզբունքի վրա: Խորհրդային պատմագիտության մեջ այս մոտեցումը եղել է հիմնականը: Դրա հիման վրա ներկայումս ընդունված է հայոց պատմության պարբերացումն ըստ հին, միջնադարյան, նոր և արդի շրջանների: Ըստ դրա՝ հայոց պատմության հին շրջանն ավարտվում է V դ., երբ ընկավ պետականությունը, հիմնավորվեց քրիստոնեությունը և ստեղծվեց այբուբենը (ոսկեդարի սկիզբը): Միջնադարյան շրջանն ավարտվում է XVII դ., երբ զարթոնք է ապրում ազատագրական պայքարը և մշակվում ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը: Նոր շրջանը թվագրվում է XVII դ. կեսերից մինչև 1918 թ.: Արդի շրջանը սկիզբ է առնում 1918 թ., երբ ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը: Այս մոտեցման հիմնական թերությունն այն է, որ մի կողմից այն խիստ ընդհանրական է՝ չառաջարկելով հետազոտության ուղղություններ և սկզբունքներ, իսկ մյուս կողմից հաշվի չի առնված հայ ժողովրդի մի խոշոր զանգվածի՝ սփյուռքի պատմությունը, քանի որ վերջինս ուղղակի չի կարող «տեղավորվել» նման տրամաբանության մեջ:

Առավել հիմնավոր և կայացած է ներկայումս պատմագիտության առաջատար դպրոցներում ընդունված՝ պատմության պարբերացման քաղաքակրթական մոտեցումը: Ըստ *քաղաքակրթական մոտեցման*՝ պատմական գործընթացը դիտարկվում է ոչ թե հիերարխիկ ուղղահայաց (ըստ հասարակարգերի), այլ տարածական-հորիզոնական հարթության վրա՝ հաշվի առնելով հանրույթների (համակեցությունների) արժեքային զարգացումը: Քաղաքակրթություններից յուրաքանչյուրն անցել է ձևավորման, զարգացման, մասնատման և անկման փուլեր: Քաղաքակրթության ներքին կազմվածքը



բաժանվում է 2 մասի՝ «ստեղծագործ փոքրամասնություն» և մասսաներ: Առաջինների առկայությունը հանդիսանում է քաղաքակրթության հիմնական բնորոշիչներից մեկը:

Հայոց պատմության պարբերացումը և դրանից բխող ուսումնասիրությունները *քաղաքակրթական մոտեցման* չափանիշներին համապատասխանեցնելը մի կողմից մրցունակ կդարձնի հայագիտական ուսումնասիրությունն արտերկրում, իսկ մյուս կողմից՝ ավելի հասկանալի ու բացատրելի կդառնա հայոց պատմության զարգացումների տրամաբանությունը:

**ԱՐՎ. ԹԵԿՆ., ԴՈՑԵՆՏ ԼԻԼԻԹ ԵՓՐԵՄՅԱՆ  
ԵՊԿ**

## **ՍԵՀԵՐԻ ԳԱՂՏՆԻՔԸ**

Հայաստանում «Ո՛չ թալանին» նստացույցի միամյակը օրերս շատ ակտիվ քննարկումներով նշվեց սոցցանցերում և մամուլում: Այն մտորելու պարարտիող ստեղծեց սոցիոլոգների, քաղաքագետների, տնտեսագետների, լրագրողների և այլոց համար: Բայց ասեմ, որ հետազոտման հսկայական կուսական նյութ բաժին ընկավ երաժշտագետներին, քանի որ ինչ-որ փուլում երգերը, պարերն ու շուրջպարերը դարձան ընդվզող ականջարժման համարյաթե հիմնական բովանդակությունը՝ շարժում, որը մոլորված ճամփորդի ազահությամբ հավեց ժողովրդական պարզ մեղեդիներին՝ ուժ և տոկունություն կորզելով: Նստացույցի ընթացքում հայտարարվեց այն մասին, որի պաշտպանություն շարժման՝ հանրահավաքներին թույլատրվում է միայն հիրավի ազգային երաժշտություն, որը չի աղավաղվել այլ մշակույթների վնասաբեր շերտերով: Կոմիտաս, մեկանգամ ևս Կոմիտաս, ազգագրական պարերի արխայիկ բանաձևեր և նորից Կոմիտաս: Հաշվի առնելով երաժշտական աղբի տոննաները, որի մեջ թաղված են մեր ականջները, ակտիվիստների այս վետոն իսկապես կարող էր մեզ փրկել: Եթե չլիներ մի «բայց»:

---

գտնելու միանգամայն տրամաբանական և գովելի ձգտմամբ մենք հայտնվում ենք այն «մաքրամաքուրների» վիճակում, որոնք ջրի հետ միասին շարտում են նաև երեխային՝ քաղաքային երգի դարերով ձևավորված որոշ շերտեր անջատելով ազգային ավանդույթից և նետելով աղբարկղները, որոնց նստացույցում ակտիվ դեր էր վերապահված:

**ՊԱՏՄ. ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ ԽՈՐԻԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ  
ԳՄՊԻ**

## **ԱՆՀԱՏԸ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ**

Հայոց պետականության վերականգնումը և Արցախյան ազատագրական պատերազմում հայ ժողովրդի հաղթանակը չհանգեցրին համակեցական առողջ արժեքների ստեղծմանը Հայաստանում, և նորանկախ Հանրապետությունը ի սկզբանե հայտնվեց ճգնաժամի պայմաններում: Հարկավ, ստեղծված քառտիկ իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ էին բանական ճիգեր, սակայն իշխանությունների աղճատված փորձերը և ընդհանրապես մտավորականության կրավորական կեցվածքը ներհակվեցին «ստեղծագործական հասարակաշինության» գործին:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար լավագույն միջոցը կլինեք բանական այնպիսի հարացույցի ստեղծումը, որի ծիրում հնարավոր կդառնա կարգաբերել համընդհանուր բարօրությունը: Ցավոք, պատմությունը ցույց է տալիս, որ պատերազմից հետո ուղիղ հերոսներն իրենց հասարակությունների համար խաղաղ ժամանակ դառնում են վտանգավոր, վերածվում են հակահերոսների, որոնց համար քաղաքացիների փոխադարձ օգուտն ու համընդհանուր բարիքը ոչինչ են: Հայոց պետականության վերականգնումը հայ ժողովրդի և նրա իշխանությունների համար դարձավ բախտորոշ փորձությունների ժամանակաշրջան: Հատկապես ժամանակի

հրամայականին համահունչ ներգործուն մտավորականության բացակայությունը, չհաշված հատուկենտ բացառությունները, հերթական անգամ մեծագույն աղետ է դարձել երկրի համար: Հնարավոր է, արդյոք, Հայաստանում ուժեղ անհատի իշխանության ներքո կարգաբերել և կանոնավորել համակեցական կյանքը: Անշուշտ հնարավոր է, և դա է իրական ճանապարհը, որի համար կան որոշակի նախապայմաններ:

**ՊԱՏՄ. ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱԳԻԿ  
ՀՊՄՀ**

## **ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ԿԵՐՊԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԺԱԴ. II ԿԵՍԻՆ**

Սելջուկ-թյուրքական նվաճումներն Առաջավոր Ասիայում վերափոխեցին տարածաշրջանում քրիստոնեական և իսլամական քաղաքակրթությունների միջև հաստատված սահմանային հավասարակշռության այն պատկերացումը, որը ձևավորվել էր Արաբական խալիֆայության անկումից հետո: Քաղաքակրթական խախտված սահմանները վերականգնելու համար Արևմտյան Եվրոպայում ձևավորվեց խաչակրաց շարժումը, որը Արևելք բերեց արևմտյան քաղաքակրթության որոշակի բաղադրիչներ:

Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը, մասնավորապես հայկական քաղաքական կառույցների ոչնչացումը և հայ բնակչության արտագաղթը Փոքր Ասիա, Հյուսիսային Միջագետք, Ասորիք խախտեցին հայ հասարակության քաղաքակրթական կազմակերպման հարացույցի որոշ բաղադրիչներ: Հայ հասարակության տարածական սահմանների ընդարձակման արդյունքում ձևավորվեց քաղաքակրթական նոր համակարգ՝ տարածք-էթնոս-մշակույթ, որը պետք է փոխարիներ հայրենիք-էթնոս-

մշակույթ համակարգին: Ձևավորված նոր իրավիճակում հայ հասարակական-քաղաքական միտքը մշակեց հայկականության հետագա կազմակերպման երեք՝ ավանդական-պահպանողական, համադրման-վերակառուցման, այլընտրանքային-կերպափոխման տարբերակներ:

Առաջին տարբերակի կողմնակիցներն աշխատում էին անփոփոխ պահել հայկական քաղաքակրթության մշակութաքաղաքական բոլոր հատկանիշները և դրանք նույնությամբ փոխանցել տարածության և ժամանակի մեջ:

Համադրման ուղղության կողմնակիցները փորձում էին այլ քաղաքակրթությունների որոշ բաղադրիչներ համադրել հայկականության հետ և այն համապատասխանեցնել նոր ձևավորված իրավիճակին: Ինչ վերաբերում է այլընտրանքային կողմնորոշմանը, ապա աշխատում էին հայկականության մշակութային միջավայրը փոխլրացնել բյուզանդական /երկաբնակություն/ կամ արևմտաեվրոպական /կաթոլիկ/ մշակույթներին յուրահատուկ բաղադրիչներով և մաս կազմել այդ քաղաքակրթություններից որևէ մեկին:

**ՊԱՏՄ. ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ ՀՄԱՅՆԱԿՅԱՆ ՀԱՍՄԻԿ,  
ՀՀ ԳԱԱ ԱԻ**

## **ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ**

Հայաստանը առաջին երկիրն էր, որ պետականորեն ընդունեց Քրիստոնեությունը, ինչը պայմանավորված էր մի շարք գործոններով: Մենք կփորձենք նախնական կերպով ընդհանրացնել այն հնարավոր հոգևոր նախադրյալները, որոնք կարող էին նպաստել Քրիստոնեության ընդունմանը Հայաստանում:

Այդ նախադրյալները, կարծում ենք, կարելի է բաժանել երեք հիմնական խմբի:

1. Առաջին խմբում մենք կդիտարկենք ընդհանրապես միաստվածային պատկերացումների հնագույն ավանդույթները, որոնք առկա էին Հայկական լեռնաշխարհի բնակիչների հավատալիքներում՝ սկսած հնագույն ժամանակներից և որոնք, մասնավորապես, իրենց դրսևորումն են գտել այս տարածքներում տարբեր ժամանակաշրջաններում ձևավորված երեք՝ Հայասայի, Ուրարտուի և հայ հեթանոսական դիցարանների գլխավոր աստվածությունների առումով: Հարկ է նշել, որ այս երեք դիցարաններն էլ հանդես են բերում որոշակի ժառանգականություն՝ դիցարանի կառուցվածքի և գլխավոր աստվածությունների առումով, ինչ քննարկվել է ուսումնասիրողների նաև մեր կողմից: Այս երեք դիցարանների գլխավոր աստվածությունները իրենց բազմաֆունկցիոնալ բնույթով հանդես են բերում միաստվածությանը բնորոշ տարրեր: Եթե հայասական և հայ հեթանոսական դիցարանների գլխավոր աստվածությունների դեպքում այդ հատկանիշը կարելի է վերականգնել և շատ ցայտուն արտահայտված չէ, ապա ուրարտական դիցարանը գլխավորող Խալդի աստծու դեպքում այդ իրողությունը առավել ակնառու է:

Հաջորդ հետաքրքրական հանգամանքն այն է, որ թե հայկական, թե ուրարատական դիցարաններում մենք չենք կարող դիտարկել աստվածների սերնդափոխություն, ինչը ընդհանրապես բնորոշ հանգամանք է այլ դիցարանների: Օրինակ՝ խուռիական, շումերական, հունական դիցարաններում երկնքի և երկրի արարիչ աստվածը մղվում է երկրորդ պլան՝ առավել երիտասարդ ռազմի, կայծակի ու պտղաբերության գործառույթներ ունեցող աստվածության կողմից, որը հիմնականում հանդիսանում էր նաև գլխավոր աստվածության որդին: Նման երևույթ չի դիտարկվում ոչ ուրարտական, ոչ հայ հեթանոսական դիցարաններում, այլապես ինչ-որ ժամանակաշրջանում Խալդու փոխարեն մենք հավանաբար պետք է տեսնեինք Թեյշեբային, իսկ Արամազդի՝ երկնքի և երկրի արարիչ աստծո փոխարեն Վահագնին, և չեն պահպանվել այդպիսի առասպելներ, ավանդազրույցներ հայոց մեջ կամ ուրարտականի դեպքում՝

արտացոլումներ, օրինակ, պատկերագրության մեջ: Իսկ խուռիական դիցարանում Կումարբի հայր աստծուն գահընկեց է անում Թեյշեբային ու Վահագնին համարժեք և նույն գործառույթներն ունեցող Թեշուբը, հունականում՝ Քրոնոսին փոխարինում է Ջևար՝ գահընկեց անելով հորը: Այս հանգամանքը կարող է տարբեր բացատրություններ ունենալ, օրինակ, որ ուրարտական և հայ հեթանոսական դիցարանի տվյալ կառուցվածքը տվյալ ամրագրված ժամանակաշրջանին բնորոշ երևույթ էր, իսկ հետագա փոփոխությունները մեզ չեն հասել: Սակայն, կարծում ենք, ավանդագրույցներում կամ ավանդապատումներում պետք է պահպանված լիներ նման երևույթ արձանագրած փաստ, ինչը դիտարկելի չէ: Այդ պատճառով մեզ առավել հավանական է թվում, որ հնարավոր բացատրություններից մեկն էլ այն է, որ լեռնաշխարհի բնակիչների պատկերացումներում խիստ կարևորվել է երկնքի և երկրի արարիչ հայր աստծո անբեկանելի և գերակա դերը և հակադրության բացակայությունը տարբեր սերնդի աստվածների միջև, ինչը հնարավոր է ինչ-ինչ հանգամանքներով պայմանավորված յուրօրինակ էթնոմշակութային մտածողության դրսևորում է: Սա ևս կարող է ընկալվել միաստվածային կրոնին բնորոշ հատկանիշ և նախադրյալ հանդիսանալ մոնոթեիստական պատկերացումների արմատավորման համար:

2. Քրիստոնեության ընդունման երկրորդ կարևոր հոգևոր նախադրյալ կարող է հանդիսանալ հնագույն ժամանակաշրջանից հարատևող մեռնող-հարություն առնող աստվածության պաշտամունքի խիստ տարածվածությունը հայոց մեջ և մասնավորապես Միիր-Միթրայի պաշտամունքի մեծապես տարածվածությունը նախաքրիստոնեական Հայաստանում և նրա հետ կապված վախճանաբանական պատկերացումները, որոնք իրենց արտացոլումն են գտել նաև հայկական էպոսում: Այս հարցը ևս բազմիցս ուսումնասիրվել է գիտության մեջ, այդ թվում և մեր կողմից, չմանրամասնելով, կնշենք միայն, որ Միիրի պաշտամունքի և

Քրիստոնեության ընդհանրությունները ակնհայտ էին և սա կարող էր լուրջ նախադրյալ հանդիսանալ քրիստոնեության տարածման և ընդունման առումով:

Հաջորդ մեռնող-հարություն առնող աստվածությունը, որի պաշտամունքը մեծապես տարածված էր Քրիստոնեության ընդունման նախօրյակին և ըստ ոսումնասիրությունների, հնարավոր է նաև Միհրի պաշտամունքի պես շարունակվել է անգամ քրիստոնեության ընդունումից հետո էլ՝ եղել է Դիոնիսոս-Սաբազիոսի պաշտամունքը: Այս աստվածության պաշտամունքը ևս մեծ ընդհանրություններ ունի քրիստոնեական հավատալիքների ու գաղափարախոսության հետ: Այս առումով ուշագրավ է այն հայտնի հանգամանքը, որ Միաձնին նվիրված քրիստոնեական առաջին տաճարը Հայաստանում՝ Էջմիածինը կառուցվում է Սպանդարամետի պաշտամունքավայրի տեղում, իսկ Սպանդարամետը հայոց պատկերացումներում, մասնավորապես Աստվածաշնչում, նույնացվել է Դիոնիսոսի հետ: Սպանդարամետ- Դիոնիսոս հնարավոր նույնականացումը ևս դեռևս անցյալ դարասկզբից քննարկվել է գիտության մեջ: Կարծում ենք, այս հանգամանքը նույնպես սիմվոլիկ է, քանզի հայտնի է, որ նոր կրոնի տաճարները կառուցվում էին իրենց համարժեք նախկին հեթանոսական սրբավայրերի տեղում, օրինակ Անահիտի կործանված մեհյանի փոխարեն կառուցվում էր Մարիամ Աստվածածնին նվիրված տաճար և այլն:

3. Նախադրյալների երրորդ խմբում մենք հնարավոր ենք համարել ընդգրկել մոնոթեիստական երկու կրոնների տարածվածությունը նախաքրիստոնեական Հայաստանում, որոնք էին զրադաշտականությունը և հուդայականությունը: Այս հարցը առավել մանրամասնորեն քննարկել է Ռ. Մանասերյանը, մենք կուզենայինք նշել, որ ըստ պատմական տվյալների ու աղբյուրների, զրադաշտականությունը տարածվել է Հայաստանում դեռևս Աքեմենյան ժամանակաշրջանից սկսած և ունեցել է տարածման մի քանի ավիք: Հաջորդը հուդայականության տարածումն է, որը ևս վկայված է աղբյուրներում և քննարկված է գիտության մեջ, և այս մոնոթեիստական կրոնների տարածումը

Հայաստանում ևս կարելի է դիտարկել կարևոր նախապայման Քրիստոնեության ընդունման առումով:

Մենք փորձեցինք հնարավորինս ի մի բերել այն հոգևոր նախադրյալները, որոնք կարող էին նպաստել Քրիստոնեության ընդունմանը Հայաստանում: Հայտնի է, որ Քրիստոնեության ընդունման նախօրեին Հայաստանում կրոնական առումով առկա բազմազանությունը սպառնում էր նրա քաղաքական միաբանությանը և նոր կրոնի ընդունումը նպատակ ուներ միավորելու երկրի բաժան-բաժան ուժերը: Եվ մեր խորին համոզմանք մոնոթեիստական կրոններից հենց Քրիստոնեությունը կարող էր իր գաղափարաբանությամբ ներդաշնակեցնել հնուց ի վեր հայոց մեջ գոյություն ունեցող մի շարք արմատավորված ավանդական պատկերացումներ, որոնք են արդեն իսկ քննարկված մոնոթեիզմին բնորոշ հատկանիշներ ունեցող հայր աստծո գերակա ու անբեկանելի դերը, մեռնող-հարություն առնող աստծո մասին խիստ արմատավորված պատկերացումները, ինչպես նաև հայր աստծո և որդու ներդաշնակությունը ու միասնականությունը, որ առկա է Քրիստոնեության մեջ և որի հետքերը մենք հնարավոր ենք համարում տեսնել մեր լեռնաշխարհում ձևավորված դիցարաններում, հանձինս նրանցում սերնդափոխության և սերունդների միջև հակադրությունների բացակայության, ի տարբերություն այլ հեթանոսական դիցարանների:



**ՍՓՅՈՒՌԸ ԵՎ ԴՐԱ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

Արևմտյան հայտնի տեսաբանները դիտարկում են քաղաքակրթությունների հիմնականում երեք տեսակներ՝ լոկալ, գլոբալ և տոտալ: Հայկական քաղաքակրթությունն այդ հեղինակների կողմից համարվում է որպես լոկալ կամ տարածաշրջանային քաղաքակրթություն: Սակայն մեր կարծիքով Հայկական քաղաքակրթությունը համարել զուտ տեղական քաղաքակրթություն այնքան էլ չի արտացոլում իրականությունը: Միաժամանակ այն համարել բացառապես գլոբալ քաղաքակրթություն ևս, կարծում ենք, սխալ է: Տարբեր պատմական փուլերում հայկական քաղաքակրթության ազդեցությունը հարևան ու հեռավոր ժողովուրդների մշակույթների վրա եղել է ոչ մշտական, ուստի կարելի է համարել, որ Հայկական քաղաքակրթությունը լոկալ քաղաքակրթություն է գլոբալ դրսևորումներով: Այդ տեսանկյունից Հայկական քաղաքակրթությունը, կարծես թե, միջանկյալ դիրք է գրավում արևմտյան տեսաբանների ձևակերպմամբ՝ լոկալ և գլոբալ քաղաքակրթությունների միջև:

Սփյուռքի քաղաքակրթական դերակատարությունը գնահատելու համար կարևոր է, որպեսզի վերջինս Հայրենիքի հետ դիտարկվի որպես մեկ ամբողջություն: Անկախ տվյալ Սփյուռքի առաջացման ժամանակաշրջանից և պատճառներից, եթե բացակայում է Սփյուռքի ընկալումը որպես Հայրենիքի շարունակություն, ապա դժվար կլինի գնահատել Սփյուռքի դերը սեփական քաղաքակրթական արժեքների պահպանման, ինչպես նաև արտահանման տեսանկյունից: Այս առումով Հայկական Սփյուռքը ևս ունի կարևոր քաղաքակրթական դերակատարություն: Հայկական Սփյուռքի քաղաքակրթական առաքելությունը բացահայտելու համար անհրաժեշտ է, որպեսզի Հայկական Սփյուռքը

դիտարկվի իր ամբողջության մեջ՝ իր նախնական ձևավորման ժամանակաշրջանից սկսած: Հայկական պատմագիտության մեջ ընդունված է համարել, որ Հայկական Սփյուռքը ձևավորվել է 1920-ական թթ. որպես հայոց ցեղասպանության արդյունք: Սակայն այստեղ խոսք կարող է լինել միայն Հայկական դասական սփյուռքի մասին, որն իրապես ձևավորվել է համազգային աղետի և հայրենազրկման արդյունքում՝ դրանով որակական, քանակական, ինչպես նաև կազմակերպական-ինստիտուցիոնալ նոր ձև տալով արդեն իսկ հարյուրամյակներ գոյություն ունեցող հայկական գաղթաշխարհին: Տերմինաբանական շփոթից խոսափելու համար անհարժեշտ է փաստել, որ Հայկական Սփյուռքը, լայն իմաստով, սկսել է ձևավորվել այն ժամանակ, երբ տեղի են ունեցել առաջին արտագաղթերն ու բռնագաղթերը Հայրենիքից: Հայոց պատմության մեջ այդ դարաշրջանը համարվում է 4-րդ դարը: Սկսած այդ ժամանակաշրջանից, յուրաքանչյուր քաղաքակրթության հիմնական բաղադրիչը կազմող մշակույթը, մեր դեպքում հայկական մշակույթը և հոգևոր արժեքներն սկսել են պահպանվել և զարգանալ նաև Հայրենիքից դուրս: Այդ պատճառով էլ պատմական տարբեր փուլերում հայկական մշակույթը՝ լայն իմաստով քաղաքակրթությունը, շարունակել է իր որոշակի ազդեցությունն ունենալ նաև այլ քաղաքակրթությունների վրա: Պետք է, նշել նաև պատմական որոշ փուլերում, պայմանավորված հայկական քաղաքակրթության զարգացումով կամ էլ որոշակի հետընթացով, այդ ազդեցությունը եղել է ավելի առարկայական, նվազ, կամ ուղղակի բացակայել է: Փաստորեն, Հայրենիքում պետականության բացակայության պայմաններում հաճախ Հայկական Սփյուռքն է ստանձնել ինքնության և հայկականության պահպանման կարևոր դերակատարումը, դրանով իր կարևոր դերը խաղալով հայկական քաղաքակրթության պահմանման առումով:

Սփյուռքը կարևոր դերակատարություն ունի նաև ինչպես սեփական քաղաքակրթական արժեքների, այնպես էլ օտար քաղաքակրթական արժեքների տարածման գործում, դրանով անփոխարինելի նպաստ բերելով քաղաքակրթությունների երկխոսության կայացմանը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է նշել, որ Սփյուռքը՝ ընդհանարպես, Հայկական Սփյուռքը՝ մասնավորապես, ունի հետևյալ երկու կարևոր քաղաքակրթական դերակատարությունները.

1. Սփյուռքը հանդիսանում է քաղաքակրթության պահպանման կարևոր ձև կամ միջոց: Այս հատկությունը հատկապես դրսևորվում է սեփական Հայրենիքում պետականության կորստի պայմաններում:
2. Սփյուռքը հանդիսանում է նաև քաղաքակրթությունների տարածման և քաղաքակրթությունների երկխոսության հիմնական միջոցներից մեկը:

**ՊԱՏՄ. ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈՐԵՐՏ  
« ՀԱԱ ԱԻ**

## **ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Մ.Թ.Ա. II ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ II ԿԵՍԻՆ**

Պետականաստեղծ գործընթացները, որոնք Հայկական լեռնաշխարհում սկսվել էին դեռևս մ.թ.ա. III հազարամյակում, իրենց շարունակական զարգացումը ստացան նաև մ.թ.ա. II հազարամյակում: Այդ ժամանակաշրջանի խեթական սկզբնաղբյուրները մեծաթիվ արժեքավոր տեղեկություններ են թողել Հայկական լեռնաշխարհում դեռևս մ.թ.ա. II հազարամյակի կեսերին (միջին և ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջան («Լճաշեն-մեծամորյան մշակույթ»-ի շրջան)) առաջացած Հայասա (Ազգի), Իսուվա (Ծոփք), Ալզի (Աղձնիք) պետությունների մասին: Հայկական լեռնաշխարհի՝ Բ.ա. II հազարամյակի I կեսի ակտիվ առևտրատնտեսական կապերը հարևան տարածաշրջանների (Փոքր Ասիա, Միջագետք) հետ նույնպես նպաստել են Հայաստանում պետությունների առաջացմանը: Այս գործընթացներում իր կարևոր նշանակությունն է ունեցել նաև Աշշուր-Քանես միջազգային տարանցիկ առևտրաուղին:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

Տեսական բնույթի հիմնահարցերը կարևոր նշանակություն ունեն հայկական քաղաքակրթության առանձնահատկությունների պարզաբանման տեսակետից: Հետագա քննարկումների համար առաջարկում ենք մի շարք դրույթներ, որոնք հիմնվում են քաղաքակրթական հետազոտությունների ոլորտի ճանաչված մասնագետների հայեցակարգային մոտեցումների վրա:

1. Հայկական քաղաքակրթությունը միասնական օրգանիզմ է, որի բոլոր հատվածները փոխկապակցված են և գտնվում են մշտական փոխգործակցության մեջ:
2. Հայկական քաղաքակրթության ժամանակային գոյատևումը կարելի է ներկայացնել որպես երեքդարաշրջանների միասնություն՝ *հին, միջին և արդի*: Դարաշրջանների տևողության չափը հազարամյակն է: Նրանք բաժանվում են *շրջափուլերի*, որոնք տևում են *հարյուրամյակներ*: Վերջիններս կազմված են *շրջաններից*, որոնք ընգրկում են *դասնամյակներ*:
3. Անցումը մի դարաշրջանից մյուսին տեղի է ունենում *մարտահրավերներին ադեկվատ* պատասխան գտնելու պարագայում: Այս դեպքում հաստատվում է *քաղաքակրթական հավասարակշռություն*:
4. Այն ժամանակահատվածը, երբ մարտահրավերներին պատասխան է տրվում, կարելի է անվանել *առանցքային շրջան*:
5. Առաջարկում է օգտագործել *հայկական քաղաքակրթական կոդ* հասկացությունը: Այն իր մեջ ներ է առնում հոգեկերտվածքի

ամենախորքային հատվածը, որը ենթակա չէ փոփոխությունների ժամանակի ընթացքում:

6. Առաջարկվում է օգտագործել նաև *հայկական քաղաքակրթության էթոս* հասկացողությունը, որն իր մեջ ընդգրկում է հայ ժողովորդի հոգեկերտվածքի այն հատվածները, որոնք արտաքին պայմանների ազդեցության ներքո ենթակա են որոշակի փոփոխությունների: Կարելի է քննարկել նաև *հայկական բարոյականության նորմեր* եզրույթի օգտագործման հնարավորությունը:

7. Կարելի է օգտագործել նաև *քաղաքակրթական նպատակ* հասկացողությունը: Առաջարկվում է հայկական քաղաքակրթությանը բնորոշ երկու նպատակները սահմանել որպես.

Ա. Պետականության ստեղծում և հզորացում

Բ. Ինքնության պահպանում և հարստացում:

8. Կարելի է կիրառել նաև *քաղաքակրթական ուժի* հասկացողությունը: Այն հնարավորություն է տալիս ավելի խորը ըմբռնելու հայկական քաղաքակրթության փոխառնչությունները այլ քաղաքակրթությունների, ինչպես նաև համամարդկային քաղաքակրթության զարգացման օրինաչափությունների հետ:

9. Հայկական քաղաքակրթության *արդի դարաշրջանի* ներկա *շրջանը* բնութագրելիս առաջարկվում է օգտագործել *ցանցային քաղաքակրթություն* բնորոշումը:

**ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ**

Հազարամյակների ժառանգություն ունեցող հայկական քաղաքակրթությունը ներկայումս կանգնած է լուրջ խնդիրների առջև, որոնցից անկարևոր չէ ազգային արժեքների պահպանումը համաշխարհայնացման (գլոբալիզացիա) արդի փուլում, երբ շատ օտար տարրեր ներթափանցում են Հայաստան, միախառնվելով մեր ազգային արժեքներին:

Ա/ Ազգային արժեքների համակարգը ներկայացնում է՝ ա) երկրի տարածքը և բնակչությունը (ՀՀ և ԼՂՀ); բ/ սփյուռքը; գ/ հասարակությունը; դ/ տնտեսությունը; ե/ մշակույթը (նյութական և հոգևոր):

Բ/ Այս բաղադրիչները ներկայումս լուրջ մարտահրավերների առջև են հայտնվել, որոնց հաղթահարման գործընթացներում որոշիչ դերերից մեկը պատկանում է ազգային հոգևոր-մշակութային արժեքների պահպանմանը, որի մի շարք հարցեր կներկայացվեն զեկուցման մեջ:

**ԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՈՍՔ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՎԱՐԻՉ,  
ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ**

Ամփոփելով գիտաժողովի աշխատանքը, կարծում եմ, կարելի է եզրակացնել, որ քննարկումները ընթացան շատ հետաքրքիր, բարձրացվեցին մի շարք կարևոր հարցեր, որոնք առնչվում են հայկական քաղաքակրթության հետագա հետազոտման առանձին կարևոր ուղղությունների ու խնդիրների հետ: Եվ շատ ուրախալի է, որ մենք այս մի քանի ժամվա ընթացքում կարողացանք հասնել որոշակի տեսական ընդհանրացումների:

Նշեմ նաև, որ մենք նախապես չէինք ընտրել զեկուցումները և ընդունել էինք այն բոլորը, որոնք ներկայացվել էին: Այս մոտեցումը մեզ հնարավորություն տվեց արձանագրելու, որ հայկական քաղաքակրթության նկատմամբ մեր երկրի գիտական շրջանակների կողմից դրսևորվում է բավական մեծ հետաքրքրություն:

Կարծում եմ, որ մյուս քննարկումները այս թեմայի վերաբերյալ պետք է լինեն ավելի նպատակաուղղված, որոշակի խնդիրներին նվիրված: Այդ հնարավորություն կտա սկսել լրջորեն աշխատել հայեցակարգային բնույթի խնդիրների վրա: Արդյունքում մենք պետք է ունենաք հայկական քաղաքակրթության ընդգրկուն հայեցակարգ, որը հետագայում կներկայացվի հանրային քննարկման:

Հարգելի գործընկերներ, մեր սույն գիտաժողովը միայն առաջին փորձն էր այդ բարդ խնդիրների ուսումնասիրման ուղղությամբ: Կարծում եմ, այն հուսադրող էր:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

**ՀՊՄՀ** - Հայկական պետական մանկավարժական համալսարան

**ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա

**ՀՀ ԳԱԱ ԱԻ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա  
արևելագիտության ինստիտուտ

**ԵՊՀ** - Երևանի պետական համալսարան

**ՀՀ ԳԱԱ ՊԻ**- Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի  
պատմության ինստիտուտ

**ԲՈՀ**- Բարձրագույն որակավորման հանձնաժողով

**ԳՄՊԻ** - Գյումրու մանկավարժական պետական ինստիտուտ